Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կապանի N 1 հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատման գործիքների կիրառումը մայրենիի դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Բալայան

Ուսուցիչ՝ Մարիամ Եսայան

Կապան 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1 : Գնահատում 5
1.1 Գնահատման համակարգի ձևավորման պատմական ակնարկ 5
1.2 Գնահատման տեսակներն ու սկզբունքները 5
1.3 Հայտորոշիչ գնահատում 7
1.4 Ձևավորող գնահատում 8
1.5 Ամփոփիչ գնահատում 10
ԳԼՈՒԽ 2 13
Գնահատման գործիքների կիրառությունը մայրենիի դասերին 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
Օգտագործված գրականությունների ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր աշխատանքում առաջընթաց ունենալու համար անհրաժեշտ է գնահատումը: Ուսուցման մեջ գիտելիքների անհրաժեշտ մակարդակին հասնելու համար առավել կարևոր է և անհրաժեշտ: Ուսումնառության սկզբունքները ամրագրված են հանրակրթության պետական չափորոշչում (ՀՊՉ): Այն նպատակ ունի սովորողների մոտ կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման: Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է համոզմունք, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնահիրացմանը:

Հետազոտության արդիականությունը: Կրթական բարեփոխումների ներկա փուլում կարևոր տեղ է տրվում գնահատման համակարգի արմատական բարեփոխմանը: Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց: Հետևաբար, ավարտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ ուսումնառությանը նպաստող գնահատման կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ սովորողները, իսկ առաջավոր սովորողները առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Այս հետազոտական աշխատանքի **նպատակն է** պարզել՝ որքանով են արդյունավետ և ճկուն սովորողի գնահատման ձևերը, մոտիվացնում են արդյոք

դրանք սովորողին, բարելավում և խթանում են աշակերտների մոտ քննադատական, վերլուծական մտածողության ձևավորումը և զարգացումը:

Վարկած: Կան բազմապիսի եղանակներ, որոնք սովորեցնում են սովորողի մոտ գիտելիքը գնահատականից վեր դասել:

Հետազոտության **խնդիրն է** ուսումնասիրել կրթական ոլորտի նորամուծությունները, գնահատման ձևերը՝ ըստ հանրակրթության պետական չափորոշչի, գնահատման մեթոդաբանությունը և դրա կիրառումը դասապրոցեսին:

Հետազոտության ընտրանքը: Փորձարարական հետազոտությունն անց է կացվել Կապան քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի Vա դասարանում: Հետազոտությանը մասնակցել է 22 դպրոցական:

Գլուխ 1 : Գնահատում

1.1 Գնահատման համակարգի ձևավորման պատմական ակնարկ

Հին և անտիկ շրջաներում անձի գնահատման և ինքնագնահատման չափանիշներն էին ընդհանուր վերացական ու օբյեկտիվ արժեքները՝ բարիքը, բարին, գեղեցկությունը, արդարությունը, ճշմարտությունը և այլն: Ինքնագնահատումը՝ որպես բարձր արժեքների հետ մարդու հարաբերակցում, համարվում էր ուսուցման և դաստիարակության կենտրոնական օղակ:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Assess՝ գնահատել, բառը ծագել է լատիներեն assidere բառից: Գիտելիքների գնահատման վերաբերյալ հարցը դիտարկելու համատեքստում անհրաժեշտ է վերհանել պատմական նախադրյալները: Գնահատականի՝ որպես ուսուցման գործընթացի բաղադրիչի, անդրադարձել են բազմաթիվ հոգեբաններ, մանկավարժներ, մտավորականներ:

Հայ մեծանուն գրող, մանկավարժ Խ. Աբովյանը, կարևորելով ուսուցման գործընթացում դաստիարակության դերը, նշում էր, որ երեխաների վարքն ուսումնասիրելու, բարոյական գծերը զարգացնելու համար կարևոր նախապայման է սիրել երեխաներին, հարգել և չվիրավորել նրանց ինքնասիրությունը, և, ընդհանրապես իրենց գործունեության ընթացքում լինել համբերող, մեղմ, ներողամիտ և հարգալից երեխայի անձի նկատմամբ: Դաստիարակության հաջողության գաղտնիքը ամենամեծ չափով պայմանավորված է դաստիարակի անձնավորությամբ, նրա բարոյական անբասիր վարքով, կենդանի օրինակով, որոնցով և ստեղծվում է նրա հեղինակությունը: Խ. Աբովյանի հեղինակությունը մեծ էր իր սաների աչքում, որովհետև վերջիններս տեսնում էին նրա մարդկային լավագույն գծերը և խորապես զգում նրա ջերմ սերն իրենց նկատմամբ[1]:

1.2 Գնահատման տեսակներն ու սկզբունքները

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշիչներով և

[1] Հայ մանկավարժներ, I Հատոր,.-Եր.: «Հայպետուսմանկհրատ», 1958.- 620էջ

ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի[2]: Այն շարունակական գործընթաց է, որը չպետք է շփոթել գնահատականի հետ: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման գործընթացի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ է:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ[3].



Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- հավաստիության
- հուսալիության
- օբյեկտիվության
- մատչելիության
- արդարության

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ, 9, կետ 37:
[3] Նույն տեղում, , 9, կետ 38:

- թափանցիկության[4]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

1.3 Հայտորոշիչ գնահատում

Հայտորոշիչ գնահատման նպատակն է բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը: Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից: Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը:

Հայտորոշիչ համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

- թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
- բանավոր հարցում.
- բաց հարցերով քննարկում[5]:

[4] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 1, կետ 3:

[5] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 2, կետ 11:

1.4 Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:



Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ: Գնահատման այս տեսակը իրականացվում է 1-12-րդ դասարաններում: Գնահատման այս ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:



Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

- ✓ գրավոր կարճ հարցում (թեստ)
- ✓ բանավոր հարցում
- ✓ գրավոր աշխատանք
- ✓ գործնական (լաբորատոր) աշխատանք
- ✓ տնային աշխատանք
- ✓ նախագծային աշխատանք
- ✓ քննարկում, բանավեճ:

Գնահատման այս տեսակը ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները: Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ,

մեկնաբանություններ[6]:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ձևավորող գնահատման քայլաշարը

1.5 Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակն է ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով: Այս գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը: Կրթական հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր: Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով: Միավորային գնահատման

[6] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 3, կետ 20:

կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է[7]:

1
- Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:

2
- Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:

3
- Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:

4
- Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:

5
- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:

6
- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:

7
- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:

8
- Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:

9
- Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:

10
- Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

[7] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 4, կետ 29:

Սովորողների առաջադիմության, նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, գնահատման համակարգն առավել ամբողջական, տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով առաջարկվում է հետևել ամերիկացի նշանավոր հոգեբան և մանկավարժ Բենջամին Բլումի դասակարգմանը: Եթե կրթության առջև դրված են որոշակի նպատակներ, ապա գնահատվում է այդ նպատակադրումների իրականցման աստիճանը: Այդ իսկ պատճառով էլ Բլումի դասակարգումը կարելի է դիտել որպես գնահատման հիմնաքար[8]:



[8] Հայոց լեզու և գրականություն«Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», 2007թ. , էջ 5

ԳԼՈՒԽ 2

Գնահատման գործիքների կիրառությունը մայրենիի դասերին

Գնահատումը անընդհատ տեղի ունեցող շարունակական գործընթաց է: Այն ամենուր է: Գնահատումը ձևավորում է աշխարհայաց, քննադատական մտածողություն: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ է: Մայրենիի դասաժամերին կիրառվում են գնահատման բոլոր ձևերը: Քննադատական մտածողության ձևավորման համար հաճախ կիրառում եմ ինքնագնահատման ռուբրիկներ: Հետազոտական աշխատանքի այս հատվածում ներկայացնենք գնահատման մի քանի օրինակներ: Փորձարարական դասի թեման է ««Առակս ի՞նչ կցուցանե» թեմայի ամփոփում»:(Տե՛ս դասի պլան 1)

Դասարանը նախօրոք բաժանվել է խմբերի: Յուրաքանչյուր խմբում կա 4-5 աշակերտ: Կազմակերպական մասից հետո ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակները, անելիքները, կանոնները:

Դասի մասերը	Ուսուցչի գործողություն	Աշակերտի գործողություն
Դասի սկզբնամաս /2-3 րոպե/	• Նախօրոք կահավորել դասասենյակը անհրաժեշտ նյութերով: • Բանավոր հարցում: • Խաղի կանոնների ծանոթացում:	• Բանավոր հարցման պատասխանում
Դասի հիմնական մաս /30-35րոպե/	• Վարում է խաղը: • Հետևում է խմբերի կարգապահությանը: • Ուշադրություն դարձնում աշակերտների խոսքին: • Հետևում է խմբերի աշխատանքների կատարման ժամանակին:	• Խմբի ավագները ընտրում են թվանշանը: • Քննարկում են հարցը և պատասխանում: • Համագործակցում են խմբի բոլոր անդամների հետ, լսում միմյանց, որոշումներ կայացնում: • Հաջորդաբար խմբերը կատարում են առաջադրանքները:
Դասի ավարտ/5 րոպե/	• Բացում է ժպիտի տակ թաքնված հարցը:	• Կատարում են առաջադրանքը:

Անդրադարձ	• Առաջարկում է ինքնուրույն շարունակել հետևյալ նախադասությունները. ▪ Ես երբեք չեմ մոռանա… ▪ Ես այսօր սովորեցի	• Կատարում են տրված առաջադրանքը:
Գնահատում	• Գնահատման աղյուսակի միջոցով /Նկ. 1/	• Ինքնագնահատում /Նկ. 2/

Դասի ավարտին սովորեղները լրացնում են ինքնագնահատման ռուբրիկը, որն ունի հետևյալ կառուցվածքը, քանի որ դաս իրականացվել է խմբային աշխատանքով.

Ինքնագնահատման ռուբրիկ

		Ակտիվ	*Հաճախ*	*Երբեմն*
1.	Մասնակցել եմ քննարկումներին			
2.	Զգալի աշխատանք եմ կատարել			
3.	Մյուսներին աշխատելու հնարավորություն եմ ընձեռել			
4.	Օգնել եմ պլանավորել առաջադրանքի կատարումը			

Այժմ դիագրամով ներկայացնենք, թե ինչպես են աշակերտները գնահատել իրենց մասնակցությունը դասերին.



Վերլուծելով արդյունքները՝ նկատում ենք, որ սովորողները համագործակցել են միմյանց հետ, լսել մեկը մյուսի կարծիքն ու տեսակետը, միասին որոշումներ կայացրել: Կարող ենք նշել, որ սովորողները կարողացել են ինքնաքննադատաբար մոտենալ հարցերին՝ նշելով իրականում իրենց կատարած աշխատանքը:

Ժամանակակից կրթության նպատակներից մեկն է զարգացնել այնպիսի անհատ, որը պատրաստ լինի ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնադաստիարակման: Ուստի դասաժամերի խնդիրներից մեկն է երեխաների մոտ ձևավորել ճանաչողական հետաքրքրություն, սեփական գործունեության վերահսկում, անդրադարձ կատարելու կարողություն և կրթվելու պատրաստակամություն: Պարտադիր է դասի անդրադարձը, քանի որ այն ձևավորող գնահատման բաղկացուցիչ մասն է: Հենց սրա օգնությամբ է ուսուցիչը վեր հանում սովորողի բացերը, չհասկացած թեմաները: Անդրադարձի համար հաճախ կիրառում ենք «կիսատ նախադասություն» մեթոդը: Փորձարարական դասի թեման է «Սմբատ Շահազիզ «Երազ» բանաստեղծությունը»:((Տե՛ս դասի պլան)

Դասի ավարտին աշակերտները պետք է շարունակեն հետևյալ նախադասությունները.

- Ես այսօր սովորեցի, որ……
- Ես չհասկացա….
- Ես կառաջարկեի…..

Այս կիսատ նախադասությունները թույլ են տալիս՝ պարզելու, թե ինչը անհասկանալի մնաց սովորողի համար, սովորողն ինքն է առաջարկում ուսումնառության ձևեր, հնարներ, որն էլ իր հերթին մոտիվացնում է սովորողին: Անհասկանալի հարցերին անդրադառնում ենք հաջորդ դասաժամին:

Առավել բարդ գործընթաց է միավորային գնահատում: Բանավոր հարցմամբ շատ հաճախ գնահատում կատարում ենք սյուբեկտիվորեն, հօգուտ աշակերտի, գնահատականը օգտագործում որպես խրախուսման միջոց: Այս պարագայում գնահատականը չի արտացոլում ուսումնառության որակն ու առաջադիմությունը: Սակայն գրավոր աշխատանքի դեպքում ստանում ենք հակառակ պատկերը: Միավորային գնահատումը լավագույնս արտացոլվում է թեստային աշխատանքների միջոցով, եթե թեստը կազմված է լինում գրագետ, դիպուկ հարցերով և հարցադրումներով:(Տե՛ս Թեմատիկ գրավոր աշխատանք N 6)



Այս դիագրամը արտացոլում է գրավոր աշխատանքի որակական վերլուծությունը: Սովորողները ունեցան 59 % որակական և 100 % առաջադիմության ցուցանիշ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով հանրակրթության պետական չափորոշիչը, գնահատման տեսակները, դրանց մեթոդաբանությունը, կիրառելով գնահատման որոշ գործիքներ մայրենիի դասաժամերին՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

- Աշակերտների ուսումնառությանը նպաստող ամենամեծ գործոնը արդյունավետ ուսուցման կազմակերպումն է, որն էլ ապահովում է սովորողների գիտելիքների, կարողությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանը:
- Պետք չէ շփոթել գնահատումը գնահատականի հետ: Գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման, սովորողի խրախուսման և շարունակական զարգացումն ապահովող միջոց է:
- Գնահատման նոր համակարգը միտված է պարզելու յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ առարկայական չափորոշիչների ու ծրագրերի կատարման պատկերը:
- Գնահատման գործիքները օգնում են սովորողին բարելավելու սեփական գիտելիքներն ու ընկալումները, խթանելու ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, ինչպես նաև ինքնաանդրադարձ, վերլուծություններ կատարելու, զարգացնելու ինքնագնահատման հմտությունները և բացահայտելու հաջողության հասնելու երաշխիքները:
- Ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, քննարկում, նկարագրում է սովորողի ձեռքբերումները, նրա ուժեղ և թույլ կողմերը ու դրան համապատասխան պլանավորում կամ վերանայում իր քայլերը:
- Ուսուցչի կողմից գրագետ իրականացված գնահատումը և որակյալ հետադարձ կապը բարելավում է ուսուցիչ- աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները, բարձրացնում է ուսումնառության որակը, սովորողների մոտիվացիան և վերլուծականությունը:

- Սովորողին տրվում է հնարավորություն մասնակցել իր ուսումնառությանը, ընտրել դասապրոցեսի վարման ձևեր, հնարներ:
- Միավորային գնահատումը չպետք է լինի զենք, այլ պիտի ներկայացնի ուսումնառության իրական որակն ու առաջադիմությունը:

Օգտագործված գրականությունների ցանկ

1. Հայ մանկավարժներ, I Հատոր,.-Եր.: «Հայպետուսմանկհրատ», 1958թ.:
2. Հայոց լեզու և գրականություն«Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», 2007թ.:
3. Հանրակրթական պետական չափորոշիչ:
4. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի պլան 1

Ամիս, ամսաթիվ՝ 24.02.2023

Ուսուցիչ՝ Մարիամ Եսայան

Դասարանը՝ Vա

Առարկան՝ մայրենի

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ «Առակս ի՞նչ կցուցանե» թեմայի ամփոփում

Դասի տիպը՝ ամփոփման դաս

Դասի նպատակը՝

- ✓ Ստուգել և ամփոփել աշակերտների ստացած գիտելիքները:
- ✓ Զնավորել անկաշկանդ արտահայտվելու հմտություններ:
- ✓ Ուսուցանել խմբային աշխատանքում համագործակցելու հմտություններ:
- ✓ Զնավորել բարձր արժեհամակարգով ապրելու գիտակցում:

Վերջնարդյունքներ՝

- ➢ Տարբերել առակի ժանրային առանձնահատկությունները, ընկալել այլաբանությունը
- ➢ Ճանաչել հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին:
- ➢ Հորինել առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատկությունները:

Դասի կահավորում՝ ՏՀՏ միջոցներ, քարտեր:

Դասին օգտագործված մեթոդներ, հնարներ՝ Խաղ-մրցույթ, խմբային աշխատանք, բանավոր հարցում:

Դասի ընթացքը

Կազմակերպական մաս: Ստուգել աշակերտների ներկայությունը: Դասարանը նախօրոք բաժանվել է 5 խմբերի: Յուրաքանչյուր խմբում կա 4-5 աշակերտ: Ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակները, անելիքները, կանոնները:

Դասի մասերը	Ուսուցչի գործողություն	Աշակերտի գործողություն
Դասի սկզբնամաս /2-3 րոպե/	• Նախօրոք կահավորել դասասենյակը անհրաժեշտ նյութերով: • Բանավոր հարցում:	• Բանավոր հարցման պատասխանում

	• Խաղի կանոնների ծանոթացում:	
Դասի հիմնական մաս /30-35րոպե/	• Վարում է խաղը: • Հետևում է խմբերի կարգապահությանը: • Ուշադրություն դարձնում աշակերտների խոսքին: • Հետևում է խմբերի աշխատանքների կատարման ժամանակին:	• Խմբի ավագները ընտրում են թվանշանը: • Քննարկում են հարցը և պատասխանում: • Համագործակցում են խմբի բոլոր անդամների հետ, լսում միմյանց, որոշումներ կայացնում: • Հաջորդաբար խմբերը կատարում են առաջադրանքները:
Դասի ավարտ/5 րոպե/	• Բացում է ժպիտի տակ թաքնված հարցը:	• Կատարում են առաջադրանքը:
Անդրադարձ	• Առաջարկում է ինքնուրույն շարունակել հետևյալ նախադասությունները. ▪ Ես երբեք չեմ մոռանա… ▪ Ես այսօր սովորեցի	• Կատարում են տրված առաջադրանքը:
Գնահատում	• Գնահատման աղյուսակի միջոցով /Նկ. 1/	• Ինքնագնահատում /Նկ. 2/

Գնահատման աղյուսակ

	Ա	Բ	Գ	Դ	☺
I խումբ					
II խումբ					
III խումբ					
IV խումբ					
V խումբ					
Ընդհանուր					

/Նկ. 1/

Ինքնագնահատման ռուբրիկ

	Ակտիվ	*Հաճախ*	*Երբեմն*
Մասնակցել եմ քննարկումներին			
Զգալի աշխատանք եմ կատարել			
Մյուսներին աշխատելու հնարավորություն եմ ընձեռել			
Օգնել եմ պլանավորել առաջադրանքի կատարումը			
Օգնել եմ պարզել և լուծել խնդիրները			

Նկ. 2

Դասի պլան 2

Ամսաթիվ՝ 03.03.2023

Ուսուցիչ՝ Մարիամ Եսայան

Դասարան՝ Vա

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ Սմբատ Շահազիզ «Երազ» բանաստեղծություն

Դասի նպատակը՝

- Ծանոթացնել բանաստեղծության բովանդակությանը:
- Ներկայացնել բանաստեղծության գաղափարը, ասելիքը:
- Հարստացնել սովորողի բառապաշարը:
- Ստեղծել նպաստավոր միջավայր՝ սեփական կարծիքը արտահայտելու համար:

Չափորոշչային վերջնարդյունքներ

- ✓ Չափածո ստեղծագործության դրսևորման ձևերի իմացություն /երգ/:
- ✓ Ընկալի գրական հայերեն տեքստը :
- ✓ Անկաշկանդ արտահայտի սեփական կարծիքը :
- ✓ Բառապաշարը հարստացնի նշույլ, բյուրեղ, ցնորամիտ բառերով:

Դասի ընթացքը, ԽԻԿ համակարգ

Կազմակերպական մաս, աշակերտների հաշվառում:

Խթանում-Բանավոր հարցում.

- Լա՞վ են քնել աշակերտները:
- Երազնե՞ր տեսնում եք, ինչպիսի՞ն են դրանք:
- Ի՞նչ զգացողություններ է արթնացնում երազ բառը:



Գրել շարադրանք՝ «Իմ ամենահիշվող երազը» վերնագրով:/5-րոպեանոց շարադրանք/

Իմաստի ընկալում-Լուռ ընթերցում են բանաստեղծությունը: Լսում համանուն երգը: Ապա կարդում են աշակերտները՝ մեկը մյուսին շարունակելով: Աշակերտների օգնությամբ ուսուցիչը բացատրում է բանաստեղծության գաղափարը, ասելիքը: Ներկայացնում է գրողի կենսագրական տեղեկություններ, դրանք կապում բանաստեղծության հետ:

Աշխատանք զույգերով- Կատարել հետևյալ առաջադրանքները.

1. Դուրս գրել գաղտնավանկ ունեցող, երկվանկ և քառավանկ բառեր:
2. Բացատրել կարմիր բառերը:
3. Որոշել բանաստեղծության հանգը, ռիթմը:

Կշռադատում- Կատարել քառաբաժան.



Անդրադարձ- Շարունակել կիսատ նախադասությունները.

- Ես այսօր սովորեցի, որ……
- Ես չհասկացա….
- Ես կառաջարկեի…..

Տնային աշխատանք- կարդալ բանաստեղծությունը, կարմիր բառերով կազմել նախադասություններ:

Թեմատիկ գրավոր աշխատանք N6

5_ րդ դասարան մայրենի , 2022-2023 ուստարի , II կիսամյակ 20միավոր

Անուն- ազգանուն———————————— ամիս-ամսաթիվ ————

1.Կետերի փոխարեն տեղադրել անհրաժեշտ հնչյունը կամ հնչյունները. 3 մ.

ա) ր / ռ ա …համարհել, թ … ջել, հ … չակ, պայտա …, քա … որդ

բ) ղ / ղղ ու …ենիշ, ու …նոր, ու …ամիտ, ու …անկյուն , փակու …ի

գ) եվ / և այգ …ետ, ուն …որ, հետ …անք, ուղ…ճար, սերկ …լենի

2.Տրված արմատներով կազմել նոր բառեր այնպես, որ բառերում հնչյունի փոփոխություն տեղի ունենա . /2 մ./

Աստղ————————————————————————————————

պղինձ ————————————————————————————————

մրջյուն ————————————————————————————————

ատյան _____

3.Գրել բառերի անհնչյունափոխ ձևը , ցույց տալ կատարված հնչյունափոխությունը.

/3 մ./

թզատերև_____

ըմպանակ _____

վիպասան _____

մասրենի _____

չվել _____

որդյակ _____

4.Խմբավորել հոմանիշ զույգերը: 2 մ.

Գութ, գորով,օրրան,մորմոք,զազրանք, հայրենիք,գուրգուրանք, թախիծ, խիղճ , գարշանք:

_____

_____

_____

_____

5.Գրել դարձվածքների նշանակությունը: /2 մ./

Մատը մատին չտալ _____

գառան մորթի հագած գայլ _____

մեկի հացին յուղ քսել _____

ուղտի ականջում քնած_____

6.Կետադրել նախադասությունները: /2 մ./

ա) Հայրիկ միթե հետ չեն գա կտրիճները:

բ) Նա ամենևին չլսեց ոչ մոր ոչ քրոջ հորդորները :

7 . Շեշտադրել բառերը։ /1 մ./

Կայսր, մի խոսեք , ուզում եք , տեխնիկա, չենք երազել, վեցերորդ, բարև, միգուցե,քիմիա, պար գալ։

8. Գրել փոքրիկ շարադրանք (առնվազն 5 նախադասությամբ) կամ կազմել նախադասություններ հետևյալ բառերով./5 մ./

նշխար, խորհել, երախտիք, զորավոր, դժնի